Բանտարկության և ազատազրկման հիմնարկներում բժշկական սպասարկման չափանիշերի ուղեցույց

Սույն ուղեցույցը պատրաստվեց բանտարկության և ազատազրկման հիմնարկներում բժշկական սպասարկման չափանիշերի և յուրահատուկ կարիքներ ունեցող անձանց բժշկական սպասարկման հավելյալ չափանիշերի փաստաթղթի հիման վրա: Նշված փաստաթուղթը հաստատված է Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարի 2015 թվականի ապրիլի 22-ի թիվ 31 հրամանով:

Չափանիշերը և ուղեցույցը մշակվել և հրատարակվել է Եվրամիության և Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքները բանտերում և փակ տիպի այլ հիմնարկներում» համատեղ ծրագրի աջակցությամբ:

Բովանդակություն

Քրեա-կատարողական հիմնարկի առողջապահության չափանիշով նախատեսված սպասարկումներ 5
Առաջնային բժշկական ստուգում 6
Առաջնային առողջապահության բուժկետի սպասարկում. 8
Հիվանդությունների կանխարգելում և առողջության խթանում. 10
Կանխարգելման փաթեթով նախատեսված հետազոտություններ 11
Պլանային ամբուլատորային և ստացիոնար սպասարկումներ 13
Սպասման ժամանակաշրջան 14
Անհետաձգելի ամբուլատորային և ստացիոնարային սպասարկում 15
Շտապ բժշկական օգնություն 16
Ատամնաբուժական սպասարկում 16
Հոգեկան առողջապահություն 17
Դեղորայքով ապահովում 17
Դեղերից կախվածության բուժում և վնասի նվազեցում 18
Բժշկական սպասարկման լրացուցիչ չափանիշեր կին մեղադրյալների/դատապարտյալների համար. 20
Հավելյալ բժշկական սպասարկում հիմնարկությունում գտնվող հղի/ծննդական և կերակրող կնոջ համար 21
Կին մեղադրյալների/դատապարտյալների փոքրահասակ երեխաներ 22
Բժշկական սպասարկման հավելյալ չափանիշեր անչափահաս մեղադրյալի/դատապարտյալի համար 23
Բժշկական սպասարկման հավելյալ չափանիշեր տարեց մեղադրյալի/դատապարտյալի համար 24
Բժշկական սպասարկման հավելյալ չափանիշեր հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և սահմանափակ կարողություններով անձանց համար 24
Սպասարկումներ և դեպքեր, որոնք պետության կողմից չեն վարձատրվում, բացառություններ՝ քրեա-կատարողական առողջապահության չափանիշից 26

Քրեա-կատարողական հիմնարկի առողջապահության չափանիշով նախատեսված սպասարկումներ

Քրեակատարողական հիմնարկներում առողջապահության չափանիշը ներառնում է հետևյալ սպասարկումները.

- Առաջնային բժշկական ստուգում
- Առաջնային առողջապահության բուժկետի սպասարկում
- Հիվանդությունների կանխարգելում և առողջության խթանում
- Պլանային ամբուլատորային և ստացիոնարային սպասարկում
- Անհետաձգելի ամբուլատորային և ստացիոնարային սպասարկում
- Շտապ բժշկական օգնություն
- Ատամնաբուժական սպասարկում
- Հոգեկան առողջապահություն
- Դեղորայքով ապահովում
- Դեղերից կախվածության բուժում և փսասի նվազեցում

Ինչպես նաև հավելյալ բժշկական սպասարկում.

- Կին մեղադրյալի/դատապարտյալի համար
- Անչափահաս մեղադրյալի/դատապարտյալի համար
- Տարեց մեղադրյալի/դատապարտյալի համար
- Սահմանափակ կարողություններով մեղադրյալի/դատապարտյալի համար

Առաջնային բժշկական ստուգում

Մեղադրյալին/դատապարտյալին հիմնարկություն ընդունվելուց 24 ժամից ոչ ուշ առաջնային բժշկական ստուգում է անցկացնում համապատասխան լիազորություն ունեցող բժիշկ-մասնագետը:

Առաջնային բժշկական ստուգման ժամանակ կատարվում է մեղադրյալի/դատապարտյալի առողջական վիճակի նկարագրություն և օբյեկտիվ փաստագրում, այդ թվում.

- Հիմնարկություն մտնելու պահին ֆիզիկական վնասվածքների և դրանց հետքի նկարագրություն և փաստագրում (բռնության նշաններ կամ/և անձի կողմից հայտարարված բռնության փաստեր, դաջվածք,պիրսինգ և այլն),
- Մեղադրյալի/դատապարտյալի համար այնպիսի վարակիչ հիվանդություն ունենալու սահմանում, որը վտանգ է ստեղծում ինչպես սեփական, այնպես էլ շրջապատում գտնվողների առողջությանը,
- Հոգեբանական օգնության անհրաժեշտության որոշում և սուիցիդի ռիսկի առաջնային գնահատում,
- Անհետաձգելի բժշկական միջամտության անհրաժեշտության (այդ թվում, թմրամոլային կամ ալկոհոլային և այլ նյութերով առաջացած ինտոքսիկացիայի (թունավորման)/կախվածության դեպքում), դետոքսիկացիայի և բուժման

անհրաժեշտության որոշում,

- Մինչև կալանավորումը/ազատազրկումը անցած բժշկական օգնությունը շարունակելու նպատակով, անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերում, այդ թվում դեղորայքով շարունակաբար ապահովում:

Առաջնային բժշկական ստուգման ժամանակ յուրաքանչյուր մեղադրյալի/դատապարտյալի համար պլանավորվում են համապատասխան լաբորատորային և գործիքային քննումներ և անց են կացվում հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

- Տուբերկուլյոզի ախտանիշների մասին սկրինինգային հարցում և ախտանիշների առկայության դեպքում՝ հետագա ախտորոշիչ հետազոտություններ: Մինչև ախտորոշման լաբորատորային հաստատումը, մեղադրյալը/դատապարտյալը մնում է վարակի տարածման նվազ ռիսկ ունեցող սպասման պայմաններում,
- Կամավոր խորհրդատվություն և թեստավորում ՄԻԱՎ վարակի/ ՁԻԱՀ-ի մասին,
- Խորհրդատվություն և կամավոր հետազոտություն B և C հեպատիտի շուրջ, ինչպես նաև առաջարկվում է B հեպատիտի դեմ պատվաստում,
- Սիֆիլիսի լաբորատորային քննություն և բուժման առաջարկություն:

Առաջնային առողջապահության բուժկետի սպասարկում.

Բանտարկության և ազատազրկման բոլոր հիմարկներում գոյություն ունի առաջնային առողջապահության թիմ:

Առաջնային առողջապահության սպասարկումը ներառնում է հետևյալը.

- Վարակիչ հիվանդությունների՝ տուբերկուլյոզի, ՄԻԱՎ վարակի/ՁԻԱՀ-ի, հեպատիտի և սիֆիլիսի կանխարգելում և վաղ բացահայտում, իմունիզացիա,
- Ոչվարակիչ հիվանդությունների՝ սրտանոթային, էնդոկրինային, այլ մետաբոլիկ (նյութափոխանակային) և ուռուցքաբանական հիվանդությունների և օստեոպորոզի կանխարգելում, սկրինինգ և կառավարում,
- Հոգեկան խանգարման կանխարգելում, սկրինինգ և կառավարում, սուիցիդի կանխարգելում, թմրամոլության կանխարգելում և վաղ բացահայտում,
- Գործառութային-ախտորոշիչ հետազոտություններ լիազորության շրջանակներում,
- Ամբուլատորային պայմաններում լաբորատոր հետազոտությունների համար նյութի ժողովում, պատրաստում և նախապատրաստում տեղափոխության համար,
- Խրոնիկական և սուր հիվանդությունների ախտորոշում և բուժում, ախտանիշների բուժում, քույրական խնամք և լիազորության շրջանակներում անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերում,
- Ուրիշ բժշկի մոտ կամ հիմարկություն վերահասցեավորման պլանավորում ինչպես կանխարգելման և սկրինինգային

սպասարկումների մատակարարման, այնպես էլ ախտորոշման և բուժման նպատակով: Այդ թվում բժիշկ-մասնագետների հետ խորհրդատվությունների և ստացիոնարային ու գործիքային հետազոտությունների համար (բարձր տեխնոլոգիական հետազոտությունների համար մեղադրյալին/դատապարտյալին վերահասցեագրելու հետ միասին պետք է հղվի բժիշկ-մասնագետի կողմից հիմնավորված նշանակում/հանձնարարականը):

- Բժշկական փաստաթղթերի վարույթ, դեղատոմսերի դուրս գրում և բժշկական փաստաթղթեր տալը գաղտնիության նորմերի պահպանումով,
- Բռնության կանխարգելում և բռնության նշանների փաստագրում ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան և, անհրաժեշտության դեպքում՝ նախարարության համապատասխան ծառայության իրազեկում, ֆիքսման/բռնության մասին վիճակագրության վարում և հաշվետվություն:

Հիվանդությունների կանխարգելում և առողջության խթանում.

Կանխարգելում նշանակում է գործնականում առողջ մարդու բժշկական հետազոտություն, որն իր հերթին ծառայում է այս չափանիշով նախատեսված հիվանդությունների վաղ փուլում ախտորոշմանը:

Առաջնային կանխարգելիչ ստուգում մեղադրյալին/դատապարտյալին անց է կացվում հիմնարկությունում տեղավորելուց խելամիտ ժամկետում, 6 ամսից ոչ ուշ (բացառություն կարող է լինել այն մեղադրյալների/դատապարտյալների առաջնային կանխարգելիչ ստուգումը, ովքեր ողջ այս ժամանակաընթացքում գտնվել են ստացիոնարային բուժման մեջ):

Առաջնային ստուգումից հետո պլանավորվում են հետագայում ևս կանխարգելիչ ստուգումներ, դրանց հաճախականությունը և ծավալը: Հետագայի հետազոտությունները կոչվում են ռուտինային (պարզ) կանխարգելիչ այցեր:

Ռուտինային կանխարգելիչ ստուգումը պարունակում է հետևյալը.

- Ռիսկ-գործոնների որոշում,
- Այլ պլանավորված սկրինինգային հետազոտություններ և խորհրդատվություններ,
- Մարմնի զանգվածի ցուցիչի սահմանում և, ռիսկի դեպքում, հետագայի խորհրդատվություն,
- Արյան և մեզի անալիզի անցկացում թեստ-ձողիկներով, զարկերակային ճնշման չափում և, անհրաժեշտության դեպքում, արյան և մեզի ընդհանուր անալիզ, կրեատինինի, լիպիդային

պրոֆիլի և TSH-ի որոշում:

Ռուտինային կանխարգելիչ ստուգման նվազագույն հաճախականությունն է.

- Անչափահաս անձանց համար՝ տարեկան 2 անգամ
- Մինչև 50 տարեկան անձանց համար՝ տարեկան մեկ անգամ
- 50 տարեկան և բարձր տարիքի անձանց համար՝ տարեկան 2 անգամ

Կանխարգելման փաթեթով նախատեսված սպասարկումներից օգտվելը ըստ ցանկության է:

Կանխարգելման փաթեթով նախատեսված հետազոտություններ

Կանխարգելման փաթեթը պարունակում է հետևյալ հետազոտությունները.

Վարակիչ հիվանդություններ.

- B հեպատիտի հետազոտություն
- C հեպատիտի հետազոտություն
- ՄԻԱՎ վարակի/ՁԻԱՀ-ի հետազոտություն
- Սիֆիլիսի հետազոտություն
- Տուբերկուլյոզի հետազոտություն

Ոչվարակիչ հիվանդություններ.

- Կրծքի քաղցկեղի սկրինինգ
- Արգանդի վզիկի քաղցկեղի սկրինինգ
- Հաստ աղիքի քաղցկեղի սկրինինգ

- Սրտանոթային հիվանդությունների ռիսկի գնահատում
- Շաքարային դիաբետ (II տիպ)
- Լսողության և տեսողության սկրինինգ
- Որովայնի զարկերակային լայնացման սկրինինգ

Իմունիզացիա

- Ազգային օրացույցով նախատեսված պատվաստում-այցեր
- Գրիպի սեզոնային պատվաստում (50 տարեկան և ավելի տարիքի անձանց համար, կամ ռիսկ-գործոնների դեպքում)
- B հեպատիտ, ռիսկի համաձայն

Ելնելով հիվանդի ռիսկից, կանխարգելիչ հետազոտությունների անցկացման պարբերականության, հաճախականության և բնույթի մասին որոշում ընդունում է համապատասխան լիազորության բժիշկը, բանտարկության և ազատազրկման հիմնարկներում բժշկական սպասարկման չափանիշին համապատասխան:

Պլանային ամբուլատորային և ստացիոնար սպասարկումներ

Պլանային ամբուլատորային և ստացիոնարային սպասարկումների նպատակն է հիվանդությունների կանխարգելումը, ախտորոշումը, բուժումը և վերականգնումը:

Պլանային ամբուլատորային սպասարկումը ներառնում է.

- Մասնագիտացված բժշկական սպասարկումներ, ինչպես առաջնային առողջապահության թիմում աշխատող բժշկի կողմից հիվանդի ուղղորդման (վերահասցեավորման) հիման վրա, այնպես էլ բուժման պլանային կուրսի շրջանակներում:

Պլանային ստացիոնարային սպասարկումը ներառնում է.

- Պլանային վիրաբուժական սպասարկում, որը համատեղում է իրականացվելիք բժշկական ընթացակարգի հետ կապված ամեն տեսակ լաբորատորային և գործիքային հետազոտությունը և մասնագետների հետ խորհրդատվությունը: Պլանային վիրաբուժական սպասարկման ժամանակ մեղադրյալի/դատապարտյալի անկողնային ձգձգումը կարող է լինել նաև 24 ժամից պակաս (ցերեկային ստացիոնար),
- Թերապևտիկ պրոֆիլով մեղադրյալի/դատապարտյալի ստացիոնարային տիպի բժշկական հիմնարկությունում 24 ժամից ավելի ժամանակով սպասում ախտորոշման կամ բուժման նպատակով:

Սպասման ժամանակաշրջան

Մեղադրյալի/դատապարտյալի պլանային սպասարկման սպասման ժամանակաշրջանը, բժշկական կարիքներից ելնելով, սահմանվում է խելամիտ ժամկետով, ինչը պլանային ստացիոնարային սպասարկման դեպքում չպետք է գերազանցի 4 ամսվան,իսկ պլանային ամբուլատորային սպասարկման համար՝ 1 ամսվան:

Այս ժամկետը կարող է պահպանված չլինել, երբ գոյություն ունեն օբյեկտիվ պատճառներ պլանավորված սպասարկման հետաձգման համար, ինչպիսին է.

- Մեղադրյալի/դատապարտյալի առողջական վիճակը,
- Պահանջվող սպասարկման/ապրանքի սահմանափակ մատչելիությունը,
- Մեղադրյալի/դատապարտյալի անվտանգության ապահովման գործընթացում առկա օբյեկտիվ խափանումը:

Պլանային ամբուլատորային և ստացիոնարային սպասարկման համար մեղադրյալի/դատապարտյալի սպասման ժամանակաշրջանը և հերթականությունը սահմանվում է հատուկ էլեկտրոնային ծրագրի միջոցով, որը վարում է Վրաստանի պատժակատարողական և պրոբացիայի նախարարության բժշկական դեպարտամենտը:

Անհետաձգելի ամբուլատորային և ստացիոնարային սպասարկում

Անհետաձգելի ամբուլատորային և ստացիոնարային բժշկական սպասարկումը ընդգրկում է բոլոր այն բուժական և ախտորոշիչ միջոցառումները, որոնք տարաժամկետելու կամ չիրականացնելու դեպքում անխուսափելի է մեղադրյալի/դատապարտյալի մահը, ֆիզիկական/հոգեբանական կարողության նշանակալից սահմանափակումը կամ առողջական իրավիճակի զգալի վատթարացումը:

- Անհետաձգելի է ամբուլատորային սպասարկումը, որը չի պահանջում մեղադրյալի/դատապարտյալի անկողնային վիճակի ձձգձգում բժշկական հիմարկությունում 24 ժամից ավելի ժամանակով և ներառնում է անհետաձգելի իրավիճակների կառավարում/կայունացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, մեղադրյալի/դատապարտյալի վերահասցեավորում անհետաձգելի ստացիոնարային բուժման համար:
- Անհետաձգելի է ստացիոնարային սպասարկումը, որը պահանջում է մեղադրյալի/դատապարտյալի անկողնային վիճակ բժշկական հիմարկությունում 24 ժամից ավելի ժամանակով, նրա կայունացման/կենսական գործառույթների պահպանման/վերականգնման նպատակով:

Շտապ բժշկական օգնություն

Շտապ բժշկական օգնությունը ներառնում է հետևյալը.

- Տեղում մեղադրյալին/դատապարտյալին անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերում,
- Տեղում իրավիճակի կայունացում,
- Կարիքի դեպքում, մեղադրյալի/դատապարտյալի տեղափոխում համապատասխան պրոֆիլի մոտակա բժշկական հիմնարկություն:

Ատամնաբուժական սպասարկում

Ատամնաբուժական սպասարկումը ներառնում է հետևյալ սպասարկումները.

- Առաջնային ատամնաբուժական ստուգում (առաջնային բժշկական ստուգման մաս), որի ժամանակ որոշվում է նաև բերանի խոռոչի ընդհանուր վիճակը և անհետաձգելի օգնության անհրաժեշտությունը:
- Առաջնային կանխարգելիչ ատամնաբուժական ստուգում, որի ժամանակ հիմնարկությունում տեղավորելուց հետո մեղադրյալը/դատապարտյալը հիմնարկությունում գոյություն ունեցող ատամնաբուժական կաբինետում պետք է անցնի նաև կանխարգելիչ ատամնաբուժական ստուգում,

Պլանային և անհետաձգելի սպասարկումներ.

- Թերապևտիկ սպասարկում
- Ամբուլատորային վիրաբուժական սպասարկում,
- Օրթոպեդիկ (հանովի պրոթեզով) սպասարկում:

Հոգեկան առողջապահություն

Հոգեկան առողջության և սուիցիդի կանխարգելման չափանիշը ներառնում է հետևյալը.

- Հոգեկան առողջության և հոգեբուժական սպասարկման կարիքների նույնականացում (առաջնային բժշկական ստուգման ժամանակ),
- Քաղաքացիական սեկտորում սկսված բուժման շարունակականության ապահովում,
- Առաջնային կանխարգելիչ ստուգման ժամանակ բժիշկ-հոգեբույժի կողմից անձի հոգեկան առողջության լրիվ գնահատում,
- Հոգեկան առողջական վիճակի ռուտինային կանխարգելիչ մոնիթորինգ, որը իրականացվում է ընտանեկան բժշկի կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտացված ախտորոշիչ սպասարկում իրականացնում է բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբանը,
- Սուիցիդի կանխարգելիչ միջոցառումների իրականացում բանտարկության և ազատազրկման համակարգում գործող սուիցիդի կանխարգիչ ծրագրի շրջանակներում,
- Հոգեկան և վարքի խանգարումներ ունեցող անձանց բուժում, հետևում և վերականգնում:

Դեղորայքով ապահովում

Մեղադրյալի/դատապարտյալի ապահովումը դեղորայքով անվճար է, բժշկի նշանակումներին համապատասխան, ուղղիչ չափանիշով սահմանված բազիսային դեղորայքի ցանկի շրջանակներում:

Ցանկը չի պարունակում սննդային և կենսահավելումներ, բուսական հիմքի վրա պատրաստված միջոցներ և կոսմետիկական

նշանակության ապրանք: Թվարկությունը տրված է ակտիվ գործող նյութերի տեսքով, համակարգված է և ընդգրկում է բոլոր բժշկական կարիքները:

Մեղադրյալը/դատապարտյալը ցանկության դեպքում իրավունք ունի , անձամբ ձեռք բերել և թվարկությունում գոյություն ունեցող ցանկացած դեղամիջոց փոխարինել բժշկի կողմից նշանակված համապատասխան բրենդային դեղորայքով:

Դեղերից կախվածության բուժում և վնասի նվազեցում

Մեղադրյալի-դատապարտյալի թմրամոլությունը կառավարելու նպատակով իրականացվում են հետևյալ կանխարգելիչ և բուժական սպասարկումները.

- Թմրամոլության կատարյալ գնահատում և օգտագործողի պատմության սահմանում,
- Մեղադրյալին/դատապարտյալին հիմնարկություն ընդունելու ժամանակ հիմնախնդրային/բարձր ռիսկի օգտագործողի նույնականացումը,
- Հատուկ վերահսկողության ենթակայությանը հավասարեցված դեղորայքով և այլ միջոցներով ինտոքսիկացիայի (թունավորման), գերդոզավորման և օրհասական իրավիճակի ժամանակ համարժեք և անհապաղ բժշկական միջամտություն,
- Կախվածության նույնականացման դեպքում, անձի համաձայնության ժամանակ, դետոքսիկացիայի և հոգեբանա-սոցիալական վերականգնողական սպասարկման անհապաղ վերահասցեավորում,
- Կարիքի դեպքում, շտապ և անհետաձգելի օգնության

ցուցաբերում (օրինակ, գերդոզավորման դեպքում),

- Ազատազրկման հիմնարկություններում իրականացվող դատապարտյալների հոգեբանա-սոցիալական վերականգնողական «Ատլանտիս» ծրագիր:

Բանտային առողջապահության չափանիշը նախատեսում է թմրամոլության փսասի նվազեցում սպասարկումների փուլային ընդարձակմամբ հետագա սպասարկումների լրիվ մատչելիության նպատակով.

- Փոխարինող թերապիա և թմրամոլության բուժման այլ մեթոդներ,
- ՄԻԱՎ վարակի/ՁԻԱՀ-ի հետազոտություն և խորհրդատվություն,
- Հակառետրովիրուսային թերապիա,
- Սեռական ճանապարհով վարակիչ հիվանդությունների կանխարգելում և բուժում,
- Պահպանակների դիստրիբուցիա (բաշխում) ներարկումային թմրադեղեր օգտագործողների և բարձր ռիսկի վարքի խմբերի համար,
- Ասեղների և ներարկիչների փոխանակման ծրագրերի առկայություն,
- Նպատակային լուսավորչական և տեղեկատվական քարոզարշավներ,
- Վիրուսային հեպատիտի պատվաստում (վակցինացիա), ախտորոշում և բուժում,
- Տուբերկուլյոզի կանխարգելում, ախտորոշում և բուժում:

Բժշկական սպասարկման լրացուցիչ չափանիշեր կին մեղադրյալների/դատապարտյալների համար.

Կին մեղադրյալների/դատապարտյալների քրեակատարողական հիմարկությունում գտնվելու ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հետևյալ տեսակի տեղեկատվության հավաքմանը և գնահատմանը.

- Հնարավոր բռնության նշաններ և անցյալում անցկացրած բռնության փաստեր (այդ թվում, տեղեկատվություն սեռական բռնության փաստերի մասին),
- Հոգեկան առողջության վիճակը, հատկապես ետտրավմային սթրեսի սինդրոմ, սուիցիդային վարք և թմրադեղերից կախվածություն,
- Հիմարկություն ընդունելիս, պետք է սահմանվի ընթացիկ հղիության, սպասվելիք ծննդաբերության փաստը կամ կրծքով կերակրող մոր կարգավիճակը,
- Կին մեղադրյալի/դատապարտյալի առաջնային ստուգման ժամանակ մեղադրյալի/դատապարտյալի բժշկական քարտում պետք է արտացոլվի նրա վերարտադրողական (ռեպրոդուկցիոն) առողջության պատմությունը (հղիություն, ծննդաբերություն, աբորտներ և գոյություն ունեցող կամ սեռական ճանապարհով անկացրած վարակիչ հիվանդություններ և այլն),
- Կին մեղադրյալի/դատապարտյալի մանկահասակ երեխա(ներ)ի կամ այլ անձի նկատմամբ խնամքի պատասխանատվություն կրելու մասին (օրինակ, տարեց անձ), ում համար սպառնալիք կստեղծի նրա բանտարկության հիմարկությունում գտնվելը, Վրաստանի պատժակատարողական և պրոբացիայի նախարարության բժշկական դեպարտամենտի

կողմից տեղեկատվություն ստանալու դեպքում բժշկական սպասարկումը պարտավոր է այս տեղեկատվությունը գրավոր փոխանցել Վրաստանի Աշխատանքի, Առողջության և Սոցիալական պաշտպանության նախարարության՝ ՀԻԻԱ «Սոցիալական սպասարկման գործակալությանը», Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով,

- Կին մեղադրյալը/դատապարտյալը իրավունք ունի պահանջել իրեն ապահովելու նույն սեռի բժշկի/բուժքրոջ սպասարկմամբ,
- Կին մեղադրյալի/դատապարտյալի համար ապահովված է հիգիենայի պաշտպանության հնարավորությունը, ինչպիսիք են հիգիենիկ տակդիրների, այլ հիգիենիկ միջոցների մատակարարումը, դրանց հավաքելու (հետդարձելու) հնարավորությունը և անձնական հիգիենայի ենթակառույցը:

Հավելյալ բժշկական սպասարկում հիմնարկությունում գտնվող հղի/ծննդական և կերակրող կնոջ համար

Քրեակատարողական հիմնարկում գտնվող հղի/ծննդական և կերակրող կնոջ համար մատչելի են.

- Ֆիզիոլոգիապես ընթացող հղիության, ինչպես նաև բարդացած հղիության, ծննդաբերության և անկողնային ժամանակաշրջանի հետ կապված սպասարկումներ,
- Նախածննդաբերության և ետծննդաբերության խնամք և սկրինինգ (ՄԻԱՎ վարակի/ՁԻԱՀ-ի, B հեպատիտի և սիֆիլիսի) ինֆեկցիաների, լրիվությամբ ապահովված են մորից երեխային ինֆեկցիաների փոխանցման կանխարգելիչ միջոցառումները

երկրում գործող կլինիկական ուղեցույցների համաձայն,

- Հիմնարկի բժշկական անձնակազմը պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի մեղադրյալը/դատապարտյալը ծննդաբերի համապատասխան պրոֆիլի բժշկական հիմնարկությունում,
- Հիմնարկում գտնվող հղի, ծննդական, ծննդաբերող և կերակրող մոր դեպքում, անթույլատրելի է ֆիզիկական սահմանափակման միջոցների կիրառում, բացի Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված դեպքերից:

Կին մեղադրյալների/դատապարտյալների փոքրահասակ երեխաներ

- Հիմնարկությունում տեղավորված կին մեղադրյալների/դատապարտյալների հետ գտնվող մինչև 3 տարեկան տարիքի երեխաները, բժշկական կարիքները որոշելու նպատակով, անցնում են առաջնային բժշկական ստուգում, որի ժամանակ նաև նրանց համար խորհրդատվություններ են անցկացնում ընտանիքի բժիշկը կամ/և մանկաբույժը:
- Հիմնարկությունում մոր մոտ գտնվող մինչև 3 տարեկան հասակի երեխաները ապահովված են առողջության պետական ծրագրերով նախատեսված պրոֆիլակտիկ պատվաստումների ազգային օրացույցով սահմանված իմունիզացիայով, սկրինինգային հետազոտություններով և համապատասխան բուժմամբ, վաղ զարգացման ծառայություններով:

Բժշկական սպասարկման հավելյալ չափանիշեր անչափահաս մեղադրյալի/դատապարտյալի համար

- Ընտանիքի բժշկի/մանկաբույժի կողմից ամբողջությամբ պետք է իրացված լինեն երկրում գործող սպասարկումները երեխաների զարգացման գնահատման և մոնիտորինգի նպատակով,
- Ապահովված է ազգային օրացույցով նախատեսված իմունիզացիան,

Անչափահաս մեղադրյալների և դատապարտյալների դեպքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում.

- Վարակիչ հիվանդությունների (այդ թվում, սեռական ճանապարհով) վաղ բացահայտմանը, բուժմանը և կանխարգելմանը,
- Դենտալային առողջությանը,
- Թմրանյութերից կախվածությանը և վնասի նվազեցման սպասարկումներին,
- Հոգեկան առողջության սպասարկումներին,
- Ֆիզիկական ակտիվության և ճանաչողական/կոգնիտուր ունակություն-սովորությունների զարգացման հնարավորությունների ստեղծմանը:

Բժշկական սպասարկման հավելյալ չափանիշեր տարեց մեղադրյալի/դատապարտյալի համար

- Տարեց մեղադրյալների համար, կարիքի դեպքում, մատչելի է բուժքրոջ խնամքը,
- Ապահովված են սպասարկումները տեսողությունը և լսողությունը կորցնելը կանխարգելելու համար,
- Ապահովված են էգզոպրոթեզներ՝ նրանց ֆիզիկական, հոգեկան առողջության, լսողության և տեսողության երկարատև պահպանության համար:

Բժշկական սպասարկման հավելյալ չափանիշեր հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և սահմանափակ կարողություններով անձանց համար

- Առաջնային բժշկական ստուգման ժամանակ որոշվում է անձի հոգեկան առողջության կամ գործառութային սահմանափակման վիճակը, որպեսզի անհապաղ նախատեսված լինեն դրանց կարիքները, որքան հնարավոր է ընդգրկվի ինչպես հարմարված շրջապատի ապահովում, այնպես էլ անհետաձգելի օգնությունը կամ առանձնացումը:
- Եթե սահմանափակ կարողություններով անձանց համար ազատազրկման հիմարկությունում գտնվելը կապված է առանձնահատուկ բնակության պայմանների ստեղծման անհրաժեշտության հետ, դրանց հարմարեցված բնակության պայմաններով ապահովման կարիքը, հիմարկի բժշկական անձնակազմի կողմից սահմանվում է գործառութային

հնարավորությունների գնահատման հիման վրա: Գործառութային իրավիճակի գնահատումը ի նկատի ունի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության բժշկական դեպարտամենտի կողմից մշակված մեթոդոլոգիայի հիման վրա անձի կարողության/ունակության որոշում այնքանով, որքանով կարող է մեղադրյալը/դատապարտյալը իրականացնել ամենօրյա գործունեություն, սեփական անձի խնամք և հոգատարություն սեփական առողջության և բարօրության մասին,

- Սահմանափակ կարողություններով անձինք հավելյալ ապահովված են սահմանափակ կարողության իրավիճակի վարման հետ կապված առանձնահատուկ խնամքով, այդ թվում, պահպանման դեղորայքային բուժմամբ, հետևմամբ, օժանդակ միջոցներով և էքզոպրոթեզներով,
- Հոգեկան խանգարվածություն ունեցող անձինք ապահովված են համապատասխան ամբուլատորային և ստացիոնարային բուժմամբ, հոգեբանա-սոցիալական վերականգնման և ճգնաժամային ինտերվենցիայի սպասարկումներով և դեղորայքով,
- Հոգեկան առողջության հիմնախնդիրներ ունեցող մեղադրյալները/դատապարտյալները, որոնց հարկավոր է բժիշկ-մասնագետների ինտենսիվ հետևում, տեղավորվում են մասնագիտացված բժշկական հիմնարկություն՝ համապատասխան անվտանգության ապահովմամբ, որտեղ անցկացված կլինեն համապատասխան ստացիոնարային հետազոտություններ և բուժում,
- Հոգեբանական խանգարվածություն ունեցող անձի ոչկամավոր բուժումը կարգավորվում է գործող Օրենսդրության համաձայն,
- Հոգեբուժական դեղորայքի կիրառումը հնարավոր է միայն բժիշկ-հոգեբույժի նշանակումով,

- Հոգեկան խանգարվածություն ունեցող մեղադրյալների/դատապարտյալների նկատմամբ ֆիզիկական սահմանափակման հնարավորությունների կիրառումը (մեկուսացում, շարժունակության սահմանափակում և այլն) պետք է հիմվի բժշկի մասնագիտական որոշման վրա,
- Մեղադրյալները/դատապարտյալները և նրանց մոտ բարեկամները (անձի տեղեկացրած համաձայնության հիման վրա) պետք է ունենան հնարավորություն, ստանալու մանրամասն տեղեկատվություն և տարրական կրթություն հոգեկան խանգարվածության մասին, խարանման և խտրականության նվազեցման, հոգեկան խանգարվածության կանխարգելման և աջակցության տեսանկյունից: Մատուցված տեղեկատվությունը կօգնի մեղադրյալներին/դատապարտյալներին և նրանց ընտանիքներին, ավելի լավ ըմբռնելու նրանց հուզական կախվածությունը ազատազրկման գործընթացից և ապահովեն նրանց հոգեկան առողջության մասին բացասական տպավորությունների նվազեցումը: Դրա հետ միասին, նրանք պետք է ունենան տեղեկատվություն երբ, որտեղ և ինչպես պետք է ստանան օգնություն հոգեկան խանգարվածության ժամանակ:

Սպասարկումներ և դեպքեր, որոնք պետության կողմից չեն վարձատրվում, բացառություններ՝ քրեակատարողական առողջապահության չափանիշից

Բանտարկության և ազատազրկման հիմարկներում պետության կողմից չեն վարձատրվում հետևյալ սպասարկումները և դեպքերը՝ բացառություններ քրեակատարողական հիմարկի առողջապահության չափանիշից.

- Բժշկական սպասարկումների հետ կապված ծախսեր, որոնք պայմանավորված չեն բժշկական անհրաժեշտությամբ,
- Այլ երկրներում բուժում,
- Լրացուցիչ սնունդ կենսաբանորեն ակտիվ հավելանյութով և Վրաստանում չգրանցված դեղագործական արտադրանքով (բուժական միջոցով) ապահովում և բուժում,
- Առանց բժշկական ցուցումի և բժշկի նշանակման բուժում, ինքնաբուժում,
- Գեղագիտական-կոսմետիկ նպատակով անցկացված բուժում և սպասարկում,
- Սանատորա-կուրորտային բուժում,
- Սեռական խախտումների/ֆունկցիայի լուծարման, անպտղաբերության բուժման ծախսեր,
- Պետության կողմից այլ ծրագրերով ֆինանսավորված սպասարկումներ, որոնցից օգտվել կարող է բանտարկյալը,
- Օրգանների տրանսպլանտացիա,
- Բժշկական-սոցիալական դատաքննություն (եթե դա անհրաժեշտ չէ բժշկական սպասարկման մատակարարման ապահովման համար),
- Դատական-բժշկական դատաքննություն (եթե դա անհրաժեշտ չէ ախտորոշման սահմանման համար կամ քրեակատարողական հիմարկի համակարգի վարչարարությամբ դժվարանում/խոչընդոտվում է դատապարտյալին քաղաքացիական սեկտորի համարժեքային բժշկական սպասարկման մատակարարումը):

Դիտողություններ ----------

შენიშვნები

შენიშვნები

შენიშვნები

შენიშვნები

შენიშვნები